

**Աշտարակ քաղաքի ջրամատակարարման
բաշխիչ համակարգերի վերակառուցման**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ԱՍՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ	4
1. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	6
1.1 Ներածություն.....	6
1.2. Ջրամատակարարման ու ջրահեռացման գործող համակարգի համառոտ նկարագրությունը	6
1.3 Աշխատանքի շրջանակները	7
2. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	8
3. Շրջակա Միջավայրի Վրա Ազդեցություն և Մեղմացնող Միջոցառումներ	11
3.1.Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ.....	11
Օդի աղտոտում.....	13
Աղմուկը և թրթռումները.....	13
Հողի էրոզիա և նստվածքների առաջացում	13
Շինարարական և կենցաղային աղբի գոյացում.....	14
Հողերի և ջրի աղտոտումը մեքենաների սպասարկումից.....	14
Հողի և ջրի աղտոտումը քլոր պարունակող միացություններով.....	15
3.2 Սոցիալական ազդեցություններ.....	15
3.3 Բնապահպանական կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ.....	20
4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	22
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ (ՇՄԿՄՊ)	22
Հավելված Ա. Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի աղյուսակ ..	24
Հավելված Բ. Դաշտային այցերի ստուգաթերթիկ.....	38
Հավելված Գ. Հանրային քննարկումների արձանագրություն և մասնակիցների ցանկ.....	44

Հապավումների ցանկ

ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ՀԶԿ	Հայջրմուղկոյուղի ՓԲԸ
ՕԿԶ	Օրվա կարգավորման ջրամբար
ՇՄԿՄՊ	Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ՀԲ ԳՔ	Համաշխարհային Բանկի գործողությունների քաղաքականություն
ԶՄՀ	Զրամատակարարման համակարգ
ԶԲՑ	Զրամատակարարման բաշխիչ ցանց
ԶևԶ	Զրամատակարարում և ջրահեռացում

ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ներկա Շրջակա միջավայրի կառավարման և մոնիտորինգի պլանը (ՇՄԿՄՊ) մշակվել է «Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման» Ծրագրի շրջանակներում իրականացվող Աշտարակ քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքների համար: ԲՄԿՊ-ը մշակվել է նախնական նախագծման փուլում իրականացված Բնապահպանական գննության արդյունքների հիման վրա ՀԲ ԳՔ 4.01/1999, Բնապահպանական գնահատման պահանջներին համապատասխան:

Բնապահպանական գննության արդյունքում կատարվել է եզրակացություն, որ Նախագիծը կարող է դասակարգվել որպես B կատեգորիա համաձայն ՀԲ ԳՔ 4.01 հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Աշտարակ քաղաքի ՋնՋ համակարգի վերանորոգման աշխատանքները հողի, ջրային ռեսուրսների, լանդշաֆտների, բուսական և կենդանական աշխարհի վրա ամենայն հավանականությամբ անդառնալի բացասական ազդեցություններ չեն ունենա: Բոլոր ազդեցությունները լինելու են ժամանակավոր, կառավարելի և կվերացվեն աշխատանքներն ավարտելուց հետո:

ՇՄԿՄՊ-ը պարունակում է մի շարք մեղմացնող և մոնիտորինգի միջոցառումներ, որոնք պետք է կատարվեն նախագծի իրականացման ընթացքում բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցություններից խուսափելու, կանխելու կամ մեղմացնելու նպատակով: Այն ներկայացնում է բացահայտված ազդեցությունները և դրանց հնարավոր վայրը, առաջարկվող մեղմացնող միջոցառումները, մեղմացման և մոնիտորինգի գործողությունների համար պատասխանատու կառույցները:

ՇՄԿՄՊ -ը պարունակում է հետևյալ տարրերի նկարագրությունը՝

- ա. Նախագծի գործողությունների շրջանակը;
- բ. Հնարավոր բնապահպանական ազդեցությունները (այդ թվում՝ ազդեցությունը հնագիտական արժեքների վրա);
- գ. Նախագծի նախաշինարարական, շինարարության և հետագա շահագործման փուլերի համար նախատեսված միջոցառումներ;
- դ. Նախագծի նախաշինարարական, շինարարության և հետագա շահագործման փուլերի մոնիտորինգի գործողություններ;

ե. Տարբեր կառույցների պատասխանատվությունը մեղմացման և մոնիտորինգի իրականացման գործում:

Վերակառուցման աշխատանքների և հետագա շահագործման տարբեր փուլերում բացասական ազդեցությունների մեղմացման համար պահանջվող միջոցառումները նկարագրված են ստորև՝

- Նախագծման փուլ.

Աշտարակ քաղաքի ՋևՋ համակարգի Մանրամասն Նախագիծը իրականացվել է CES Consulting Engineers Salzgitter կազմակերպության կողմից: 2014 թ. Կազմված Նախագծային փաստաթղթերում պարունակվում են տեղեկություններ կլիմայական պայմանների, ռելյեֆի, հողի տիպերի, հիդրոլոգիական տվյալների, բուսական և կենդանական աշխարհի մասին, ինչպես նաև Բնապահպանության նախարարությունից և իշխանության այլ մարմիններից համապատասխան թույլտվությունների ձեռք բերման պահանջներ: Նախագծող Խորհրդատուն պարտավոր է հետևել ՀՀ բնապահպանական և սոցիալական օրենսդրությանը, ինչպես նաև ՀԲ համապատասխան ուղեցույցներին և քաղաքականություններին, ինչպես նշված է ՀԲ ԳՔ 4.01/1999, Բնապահպանական գնահատում փաստաթղթում:

- Շինարարության փուլ.

Ընդհանուր առմամբ շինարարության Կապալառու կազմակերպությունը պարտավոր է հետևել ներկա ԲՄԿՊ-ում ներկայացված միջոցառումներին, ինչպիսիք են մասնավորապես բնակավայրերին մոտ տեղամասերում փոշու և աղմուկի նվազեցումը և այլն: Կապալառուն նաև պարտավոր է հաղորդակցվել պետական և տեղական մարմինների հետ և ձեռք բերել բոլոր այն թույլտվությունները, որոնց անհրաժեշտությունը կարող է ի հայտ գալ շինարարության ընթացքում:

- Շահագործման փուլ.

ՇՄԿՄՊ-ում նախատեսված մեղմացնող միջոցառումների ցանկը ներկայացված է [Հավելված Ա](#)-ում.

1. ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Ներածություն

ԱԶԲ կողմից ֆինանսավորվող «Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծում» Ծրագրի նպատակն է Աշտարակ և Էջմիածին քաղաքների որոշակի ընտրված թաղամասերի խմելու ջրամատակարարման բարելավումը: Մանրամասն նախագիծը պատրաստվել է CES Consulting Engineers Salzgitter կողմից ՀԶԿ ՓԲԸ պատվերով: Նպատակին հասնելու համար մանրամասն նախագիծով Աշտարակ քաղաքում Ծրագրի տարածքում նախատեսված է իրականացնել ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերակառուցում: Ծրագիրն ընդգրկում է քարտեզի վրա նշված տարածքը (տես [Հավելված Բ](#))

1.2. Ջրամատակարարման ու ջրահեռացման գործող համակարգի համառոտ նկարագրությունը

1.2.1 Ջրամատակարարման բաշխիչ ցանց

Աշտարակ քաղաքի մոտ 62կմ ջրամատակարարման բաշխիչ ցանցը իրականացված է 50-200մ տրամագծի մետաղական և պոլիէթիլենե խողովակներով: 2007թ-ին ՀԲ-ի Աշտարակ քաղաքի ջրամատակարարման համակարգի բարելավման ծրագրի շրջանակներում փոխարինվել է շուրջ 4.5 կմ երկարությամբ պոլիէթիլենե ջրագծեր: 2013-14թթ. ՀԲ-ի ֆինանսավորմամբ փոխարինվել է շուրջ 14.5կմ բաշխիչ ցանցի և մոտ 4.5կմ ներտնային պոլիէթիլենե ջրագծեր: Քաղաքի բաշխիչ ցանցը գոտիավորված չէ, որի պատճառով նրանում առաջանում են անթույլատրելի մեծ ճնշումներ՝ առաջացնելով վթարներ, անհարկի հոսակորուստներ: Ներքին բաշխիչ ցանցը տեխնիկապես մաշված է, որի պատճառով առկա են զգալի մեծ հոսակորուստներ: Համաձայն ՀԶԿ ՓԲԸ-ի տվյալների Աշտարակ քաղաքի ջրամատակարարման համակարգում հոսակորուստը կազմում է ավելի քան 90%:

1.2.2 Ջրահեռացման համակարգ

Աշտարակ քաղաքի ձախափնյա հատվածում առկա է մեկ կոյուղագիծ $d=400$ մ տրամագծի, կառուցված թուջե խողովակներից: Այն ծառայում է որպես կենտրոնական կոլեկտոր, ընդգրկում է քաղաքի ձախափնյա թաղամասում կառուցված բոլոր ադմինիստրատիվ և հասարակական շենքերը, հարակից

առանձնատները: Հավաքված կեղտաջրերը հեռացվում են քաղաքի սահմաններից դուրս: Կոյուղու այս կոլեկտորը նախատեսված է եղել միացնել Օշական գյուղում կառուցված, բայց չշահագործված կեղտաջրերի մաքրման կայանին: Սակայն այդ միացումը չի իրականացվել: Ներկայումս կոլեկտորով հավաքված կեղտաջրերը քաղաքի սահմաններից դուրս լցվում են Քասախ գետը:

Քաղաքի ուսումնասիրվող հատվածի բոլոր բազմաբնակարանային շենքերը, որոնք կազմում են թաղամասի հիմնական մասը, կոյուղացված են: Կառուցված է կենտրոնացված ջրահեռացման համակարգ, որը ներկայումս գտնվում է տեխնիկապես բավարար վիճակում: Բոլոր կոյուղագծերը միացված են մեկ ընդհանուր կոլեկտորին, որով հավաքված կեղտաջրերը թափվում են Քասախ գետը: Այդ երևույթը հանդիսանում է շրջակա միջավայրի անցանկալի աղտոտվածության պատճառ:

Քաղաքի կոյուղու համակարգի կառուցման տարիներին, նկատի ունենալով բնակչության հեռանկարային զարգացումը, տեղադրվել են են Փ200-Փ800մմ խողովակներ: Հաշվի առնելով շահագործման տարիներին համակարգում կատարված չափումները, վթարների սակավությունը, կարող ենք եզրակացնել, որ ջրամատակարարման համակարգի բարելավման արդյունքում ավելացվող ջրաքանակը չի խանգարի կոյուղու համակարգի բնականոն աշխատանքին:

1.3 Աշխատանքի շրջանակները

- Բաշխիչ ցանցում նախատեսված է՝ 50- 225մմ տրամագծերի պոլիէթիլենե ջրագծի կառուցում, մոտ 21կմ ընդհանուր երկարությամբ,
- ընդհանուր թվով 34 բազմաբնակարան շենքերի 2.0կմ ընդհանուր երկարությամբ de90-63 մմ տրամագծերի պոլիէթիլենե մուտքագծերի կառուցում,
- ընդհանուր թվով 922 բաժանորդների անհատական տների ջրաչափական հանգույցների և մոտ 9.5կմ ընդհանուր երկարությամբ 20-32մմ տրամագծերի մուտքագծերի կառուցում,
- Վերգետնյա տեղադրման 8 հատ հրշեջ հիդրանտների կառուցում,
- Ջրամատակարարման հորերի կառուցում 6 հատ,
- Թաղված տեղադրման փականային հանգույցների կառուցում 27 հատ;
- Օրվա կարգավորման ջրամբարի տարածքի ցանկապատում՝ 405.0մ ընդհանուր երկարությամբ:

*Աղյուսակ 1. Նախագծով նախատեսված աշխատանքների շրջանակը
Աշտարակում*

Նախագծով նախատեսված աշխատանքներ	Քանակ	
	կմ	
Բաշխիչ ցանցում de50-225 մմ տրամագծերի պոլիէթիլենե ջրագծերի կառուցում	կմ	21.0
Բազմաբնակարան շենքերի de90-de63 տրամագծերի մուտքագծերի կառուցում	կմ	2.0
Ջրամատակարարման հորերի	հատ	6
Թաղված տեղադրման փականային հանգույցներ	հատ	27
Անհատական տների ջրաչափական հանգույցներ	հատ	922
Անհատական տների մուտքագծեր	կմ	9.5

2. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Աշխարհագրական դիրքը և կլիման

Աշտարակ քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևմտյան մասում, Քասախ գետի ափին, ծովի մակերևույթից 1100մ բարձրության վրա, Արարատյան դաշտի և Արագածի լեռնազանգվածի կենտրոնում, Երևան մայրաքաղաքից 23կմ հյուսիս արևմուտք: Ուսումնասիրվող տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից մտնում է Արագած լեռան ստորին լանջերի մեջ: Արևելքից այն շրջափակված է Արայի լեռան լանջերով և Եղվարդի սարահարթով, իսկ հյուսիսից և արևմուտքից Արագածի լանջերով:

Կլիման բնութագրվում է ցուրտ ձմեռով և շոգ ամառով: Տարվա ամենացուրտ ամիսը հունվարն է, ամենատաքը՝ հուլիս-օգոստոսը: Տարեկան միջին օդի ջերմաստիճանը 11.1°C է: Բացարձակ նվազագույնը -29°C է, առավելագույնը +41°C: Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը 61% է: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 366մմ է: Տարեկան կտրվածքով հիմնական տեղումները լինում են ապրիլ-մայիս ամիսներին: Ձյան շերտի հաստությունը հասնում է մինչև 1.0մ-ի: Գրունտի սառեցման առավելագույն խորությունը 70սմ է:

2.2 Երկրաբանական կառուցվածքը և հողերի տիպերը

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքում մասնակցում են չորրորդականի հասակի էլուվիալ ծագման ապարները, որոնք ներկայացված են հրաբխային տուֆերով, տուֆոլավաներով, բազալտներով, անդեզիտային բազալտներով, անդեզիտներով, անդեզիտային դագիտներով և դագիտներով:

Չորրորդական հասակի ապարները հիմնականում մերկանում են Քասախ գետի կիրճում, մնացած մասերում նրանք ծածկված են ոչ մեծ հզորության ժամանակակից առաջացումներով, որոնքներ կայացված են ավազակավերով և բեկորա-խճաքարերով:

Ընդհանուր առմամբ Արագածոտնի մարզի տարածքում տարածված են վերին գոտիներում՝ հումուսով հարուստ սևահողեր ավազակավային կազմի, միջին գոտիներում՝ քարքարոտ հումուսով աղքատ հողեր, իսկ ներքին գոտիներում՝ կիսաանապատային հողեր: Լանդշաֆտը նախալեռնային է, կան նաև կիսաանապատային տեղամասեր:

Նախնական նախագծման փուլում արխիվային նյութերի և գրականության տվյալների հիման վրա կատարվել են նախնական ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ Աշտարակ քաղաքի ձախափնյա հատվածում: Նախագծվող տարածքում առանձնացվել է գրունտների վեց շերտեր (Շերտերի լիթոլոգիական նկարագրությունները տեսՆախագծիբացատրագրում, էջ 4):

Նախագծվող ջրագծերի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքներից ելնելով ուսումնասիրվող տարածքում նախանշել են գրունտների հետևյալ չափաբաժինները.

1. Ասֆալտ - 10% (12/13) (V)
2. Խճաքարեր - 10% (13/14) (IV)
3. Ավազակավեր - 10% (33^ա/33^բ) (III)
4. Բեկորա-խճաքարեր - 30% (12/13) (V)
5. Տուֆեր - 30% (37/37) (V)
6. Անդեզիտային բազալտներ - 10% (19/20^ա) (VII)

Աշխատանքային գծագրերում տրված են ճշգրտված երկրաբանական կտրվածքներն՝ ըստ նշակետերի և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները: Ուսումնասիրվող տարածքներում ֆիզիկա- երկրաբանական երևույթները արտահայտված են մայր ապարների հողմնահարմամբ և Քասախ գետի կիրճում քարաթափվածքների առկայությամբ:

2.3 Հիդրոերկրաբանական նկարագրություն

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը կախված ռելիեֆից և երկրաբանական կտրվածքից համարվում է լավինֆիլտրացվող գոտի: Մթնոլորտային տեղումների հիմնական մասը ներծծվելով ճեղքավորված չորրորդականի հասակի ապարների մեջ շարժվում է դեպի Արարատյան

դաշտավայր և համարվում է արևելյան ջրավազանի սնուցման աղբյուր: Ինֆիլտրացվող ջրերի մի մասը չորրորդական հասակի տարբեր լավային հոսքերի կոնտակներից դուրս են գալիս երկրի մակերես մեծ ելքեր ունեցող աղբյուրների տեսքով: Նշված աղբյուրներից են՝ Ապարանի (830/վրկ), Շոր-շորի (460/վրկ), Նազերվանի (414 /վրկ), Բազմաղբյուր (175/վրկ), Քուչակի (156/վրկ), Սաղմոսավանի (90/վրկ), և Արտաշավանի (60/վրկ), աղբյուրները, որոնցից ներկայումս սնվում են հանրապետության մի շարք քաղաքներ և գյուղեր (Երևան, Աշտարակ, Էջմիածին և այլն):

Այսաղբյուրները քաղցրահամ են և պիտանի են խմելու համար:

Անցած դարի 70-80 սկաններին Կարբի, Ղազարավան և Բազմաղբյուր գյուղերի շրջակայքում կատարված հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է ստորերկրյա ջրերի հոսք, որը կապված է Քասախ գետի հին հունի հետ: Ստորերկրյա ջրերի մակարդակը տատանվում է 35-65մ-ի միջև: Ներկայումս այդ ջրերի մի մասը խորքային հորերի միջոցով օգտագործվում է շրջակա գյուղերի ջրամատակարարման և ոռոգման համար:

2.4 Կենսաբազմազանություն

Մարզի տարածքը գտնվում է Արայի և Արագած լեռների ֆլորիստիկ շրջանում: Տարածաշրջանում տարածված են նախալեռնային և կիսաանապատային բուսատեսակները, մասնավորապես մեծ տարածում ունեն շուշանազգի բույսերը:

Մարզի տարածքը հարուստ է սողուններով և միջատներով: Տարածված կենդանիներից են գայլը, աղվեսը, նապաստակը: Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող տարածքը ներկայացված է 100-ից ավել հազվագյուտ և 36 էնդեմիկ տեսակներով:

Օրագրի տարածքում բուսականությունը ներկայացված է քաղաքային բարեկարգման մաս կազմող արհեստականորեն հիմնած ծառերով և թփերով, ինչպես նաև անհատական տնամերձերում՝ պտղատու ու խաղողի այգիներով և բանջարաբուստանային կուլտուրաներով: Տնամերձ հողակտորներում բնակչությունը զբաղվում է նաև խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Այստեղ չկան մարզի համար տիպիկ հազվագյուտ կամ էնդեմիկ վայրի բնության բուսատեսակներ և կենդանատեսակներ, բացակայում են էկոլոգիական տեսակետից զգալուն տարածքներ, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներ: Քաղաքի ուսումնասիրվող հատվածը չունի նաև մշակութային, հնագիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող տարածքներ:

2.5 Վարչական և սոցիալական պայմաններ

Աշտարակ քաղաքը ՀՀ Արագածոտն մարզի վարչական կենտրոնն է: Համայնքի վարչական տարածքի մեջ է մտնում Աշտարակ քաղաքը և Մուղնի գյուղը: Հանդիսանում է տրանսպորտային հանգույց: Այստեղով են անցնում Երևան-Աշտարակ-Թալին միջպետական նշանակության ավտոմայրուղին: Աշտարակն ունի միջնակարգ դպրոցներ, երաժշտական և մարզական դպրոցներ, մանկապարտեզներ, մշակույթի տուն, գրադարաններ, մարզադաշտ, հիվանդանոց, պոլիկլինիկա, կապի հանգույց: Քաղաքը կառուցապատված է բազմաբնակարան 5 հարկանի շենքերով և 1-2 հարկանի տներով: Կա 9-հարկանի մեկ շենք: Տնտեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում արդյունաբերությունը: Ծրագրի իրականացման տարածքը խիստ ուրբանիզացված է և բնութագրվում է փոխակերպված կառուցապատված լանդշաֆտով:

2.6 Պատմամշակութային հուշարձաններ

Քաղաքի ուսումնասիրվող հատվածը չունի հատուկ պահպանություն պահանջող մշակութային, հնագիտական կամ պատմական արժեքներ կամ հուշարձաններ:

3. Շրջակա Միջավայրի Վրա Ազդեցություն և Մեղմացնող Միջոցառումներ

Շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա դրական և բացասական ազդեցությունները, ինչպես նաև դրանց կանխարգելման կամ մեղմացման միջոցառումները, որոնք իրականացվելու են ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների և հետագա շահագործման ընթացքում ներկայացված են ստորև:

3.1. Շրջակա միջավայրի վրա ազդեցություններ

Բնապահպանական նախնական գննությունը (ԲՆԳ) ցույց է տվել, որ Ծրագրի իրականացումը կունենա զգալի դրական և որոշ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա: Դրական ազդեցությունների թվին են պատկանում՝

- ջրային ռեսուրսների պահպանություն և կայուն ջրօգտագործում;
- արտահոսքերի և ջրակորուստների կրճատումը;
- ջրի քանակի հաշվառման համակարգերի նրդրման միջոցով ջրօգտագործման արդյունավետության բարձրացումը և գերօգտագործումից խուսափումը;

Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծում

- կայուն ջրայինօգտագործման ապահովումը;
- բնակչությանը օրեկան ջրամատակարարման տևողության ավելացումը;
- խմելու ջրի որակի բարելավումը;
- ջրի աղտոտման վտանգի կրճատում խմելու ջրի և ոռոգման ու կոյուղաջրերի խառնվելուց խուսափելու շնորհիվ;
- Խմելու ջրում հիվանդությունների վարակիչ հարուցիչների ներափանցման կանխումը;

ԲՆՁ-ն եզրակացրել է, որ Ծրագրի տարածքում անդառնալի ազդեցություններ լանդշաֆտների, բուսական և կենդանական աշխարհի վրա չեն սպասվում:

Հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում կապված են լինելու շինարարական աշխատանքների հետ և հետևաբար լինելու են սահմանափակ և ժամանակավոր բնույթի: Ծրագրի շրջանակներում մշակվել է բացասական ազդեցությունները մեղմացնող և կանխարգելող միջոցառումներ ընդգրկող Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլան (ԲԿՄՊ) (տես [Հավելված Ա](#)): ԲԿՄՊ-ն ընդգրկված է մրցութային փաստաթղթերի կազմում: Այն պարտադիր է շինարարության Կապալառուի կողմից կատարման համար և ենթակա է վերահսկող կառույցի կողմից մոնիտորինգի:

Հիմնվելով Բնապահպանական գնության արդյունքների վրա բացահայտվել են Ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվող շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա հետևյալ ազդեցությունները.

- Օդի աղտոտում շինարարական տեղնիկայից և մեքենաներից արտանետվող գազերով և փոշով;
- Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում շինարարական տեղնիկայի և մեքենաների գործողության հետևանքով;
- Հողի էռոզիա և նստվածքների, խցանումների առաջացում;
- Շինարարական և կենցաղային աղբի գոյացում և միջավայրի աղտոտում;
- Հողի և ջրային ռեսուրսների աղտոտում յուղերով, վառելանյութերով և քսանյութերով;
- Հողի և ջրային ռեսուրսների աղտոտում քլոր պարունակող միացություններով:

Օդի աղտոտում

Օդի աղտոտումը կանխելու և փոշու գոյացումը նվազեցնելու նպատակով շինարարական նյութերը և թափոնները տեղափոխվելու են ծածկ ունեցող բեռնատար մեքենաներով; շինարարական հրապարակը պարբերաբար ջրցանվելու է և պահվելու է խոնավ վիճակում հատկապես քամոտ եղանակին և բնակելի հատվածին մոտ տարածքներում: Փոշոտ միջավայրում աշխատելիս բանվորները ապահովվելու են և կրելու են պաշտպանիչ դիմակներ: Կապալառուն խուսափելու է կուտակված շինարարական և կենցաղային աղբը թողնել կամ այրել շինհրապարակում:

Աղմուկը և թրթռումները

Աղմուկի և թրթռումների մակարդակը կառավարելու նպատակով չափազանց մեծ աղմուկ և թրթռումներ առաջացնող հնացած ֆիզիկապես և բարոյապես մաշված մեքենաների և սարքավորումների կիրառումը բացառվելու է: Օգտագործվելու են միայն սարքին խլացուցիչներով ապահովված մեքենաներ, որոնց պատշաճ վիճակը պարբերաբար հսկվելու է:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են, որպես կանոն, ցերեկային ժամերին, հակառակ դեպքում առավել խիստ մեղմացնող միջոցառումներ են կիրառվելու աղմուկի մակարդակը բնակելի վայրերի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի սահմաններում պահելու նպատակով: 85 dB –ից բարձր աղմուկ առաջացնող սարքերի հետ աշխատող անձնակազմը ապահովվելու է պաշտպանիչ ականջակալներով:

Հողի էրոզիա և նստվածքների առաջացում

Թեքություն ունեցող ռելիեֆի պայմաններում փորվածքների շեղերը ամրացվելու են հողի էրոզիայից և նստվածքների առաջացումից կանխելու նպատակով: Հնարավորինս նվազագույնի է հասցվելու այն ժամանակահատվածը, որի ընթացքում փորված խրամուղիները և կարգավորիչ և ջրաչափերի փականային հանգույցների փոստրակները մնալու են բացված վիճակում:

Շինարարական աշխատանքների վերջում խախտված մակերեսները վերականգնվելու են և բերվելու են նախնական տեսքի նախագծին համապատասխան.

- իրականացվելու է փորված խրամուղիների հետլիծք հողային հանույթի զանգվածով;

- նախկինում ասֆալտածածկ փողոցների ասֆալտապատվելու են;
- նախկինում գրունտային կամ խիստ քայքայված ու կիսաքանդ ասֆալտածածկ ունեցող ճանապարհները վերականգնվելու են գրունտային ծածկոնքով:

Շինարարական և կենցաղային աղբի գոյացում

Ավելցուկային հողային հանույթի, յուղերի և վառելանյութերի արտահոսքերի և այլ թափոնները Կապալառուի կողմից կառավարվելու են ԲԿՄՊ համապատասխան: Շինարարության ընթացքում կարող են գոյանալ պինդ թափոններ փողոցների և ճանապարհների քանդված ծածկույթի, օգտագործված յուղերի ֆիլտրերի, նյութերի փաթեթների և այլնի տեսքով: Հեղուկ թափոնները կարող են լինել օգտագործված յուղերի, վառելանյութերի արտահոսքերի և կեղտաջրերի տեսքով: Կապալառուի կողմից առաջացրած թափոնները հավաքվելու, տեսակավորվելու, տեղափոխվելու և տեղադրվելու են աղբավայրերում ՀՀ օրենսդրության և Բնապահպանության նախարարության պահանջներին համապատասխան:

Աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն ստանալու է տեղական իշխանությունների կողմից տրված շինարարական և կենցաղային թափոնների տեղադրման թույլտվությունը:

Մեղմացնող միջոցառումներն են՝ Կապալառուն կուտակելու է շինարարական աղբը կանոնավոր կույտերով նախնական կուտակման համար հատկացված վայրում, ինչպես նաև կենցաղային աղբի համար տեղադրելու է աղբամաններ: Կուտակված թափոնները պարբերաբար հեռացվելու են շինհրապարակից և տեղադրվելու են տեղական իշխանությունների կողմից հատկացված աղբավայրում: Այն դեպքում, երբ հատկացված վայրը արդեն գործող աղբավայր է՝ պետական մարմնի թույլտվությունը բավարար է: Այն դեպքում, երբ տեղական իշխանությունների կողմից հատկացված վայրը նոր նախկինում չիախտված բնության հատված է՝ տեղամասի բնապահպանական գնահատման հաշվետվություն է ներկայացվելու Գործատուին և ձեռք է բերվելու վերջինիս համաձայնությունը մինչև տեղամասի օգտագործումը սկսելը:

Հողերի և ջրի աղտոտումը մեքենաների սպասարկումից

Հնարավոր է հողի կամ ջրային ռեսուրսների աղտոտումը վառելիքի և յուղերի ոչ պատշաճ պահեստավորման կամ օգտագործման արդյունքում արտահոսքերի հետևանքով: Արտահոսքերը կարող են աղտոտել հողի մակերեսը և թափանցել ստորերկրյա ջրերի մեջ: ՇՄԿՄՊ-ում նախատեսված մեղմացնող միջոցառումները ենթադրում են հնարավորինս խուսափել յուղման կամ վառելիքով լիցքավորման

աշխատանքներն շինհրապարակում կամ հարակից տեղանքում իրականացնելուց: Այն դեպքում, երբ հնարավոր չէ խուսափել, քսանյութերի, վառելիքի պահեստավորումն ու մեքենաների սպասարկումը իրականացնել մեկուսացված տարածքներում, հողի մակերեսը ծածկվելու է մեկուսիչ ծածկով: Ցանկացած արտահոսքից հետո աղտոտված մակերեսը մաքրվելու է:

Վառելանյութերով և յուղերով ջրային ռեսուրսների աղտոտումից խուսափելու նպատակով մեքենաների սպասարկման աշխատանքներն իրականացվելու են ջրային մարմիններից անվտանգ հեռավորությունը պահպանելով: : Օգտագործված յուղերն ու քսանյութերը հավաքվելու են հատուկ տարաներում, այնուհետև հեռացվելու և տեղափոխվելու են վերամշակման: Ցուղերի և այլ քսանյութերի արտահոսքերով աղտոտված հողի զանգվածը հավաքվելու է և տեղադրվելու է տեղական մարմինների կողմից թույլատրված վայրում:

Հողի և ջրի աղտոտումը քլոր պարունակող միացություններով

Հողի և ջրի քլոր պարունակող նյութերով աղտոտումը բացառելու համար ջրամատակարարման բաշխիչ ցանցի խողովակները լվացվելու և ախտահանվելու են խիստ համապատասխանագործող տեխնիկական նորմերին: Կապալառուն ապահովելու է գործողությունը անվտանգ իրականացնելու համար անհրաժեշտ տեխնիկական հարմարությունները: Լվացման արդյունքում գոյացած քլոր պարունակող կեղտաջրերը հեռացվելու են Ջրամատակարարման խողովակների սանիտարական հսկողության և տեխնիկական շահագործման մեթոդական ուղեցույցին համապատասխան: Ուղեցույցն առաջարկում է կալցիումի հիպոքլորիդի դոզայի հաշվարկը, որը բավարար է մի կողմից՝ ջրի խողովակների անվտանգ վնասազերծումն ապահովելու, մյուս կողմից՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունից խուսափելու համար: Խողովակների վարակազերծման նպատակով կալցիումի հիպոքլորիդի լուծույթն ավելացվում է այնքան չափաքանակով, մինչև խողովակաշարի վերջում ջրում ազատ քլորի խտությունը կազմի տրված չափաքանակի 50%-ը: Լուծույթը թողնվելու է խողովակներում 5-6 ժամ, որից հետո խողովակները լվացվելու են այնքան ժամանակ մինչև քլորի պարունակությունը կազմի 0.3-0.5մգ/լ:

3.2 Սոցիալական ազդեցություններ

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է զգալի դրական ազդեցություններ Աշտարակ քաղաքի բնակչության վրա: Այն բարելավվելու է Ծրագրի տարածքի բնակչության կյանքի պայմանները. Մոտ2622բաժանորդներուղակիորեն կօգտվեն Ծրագրից(922 տնային

Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծում

տնտեսություններ և 1700 բազմաբնակարանային շենքերի բաժանորդներ), ինչպես նաև ՋևՋ համակարգի 6248 բաժանորդներ, որոնցից 3309 անհատական տներ են և 2939 բազմաբնակարան շենքերի բաժանորդներ նույնպես անուղղակիորեն կօգտվեն Ծրագրից, համակարգում առավել հուսալի ջրամատակարարում ապահովելու շնորհիվ:

Աղյուսակ 1. Աշտարակ քաղաքում Ծրագրի շահառուների մասին տվյալներ (բնակչություն և տնային տնտեսություններ)

Բնակավայր	Ծրագրի շրջանակներում բարելավված ջրաղբյուրից սնվող շահառուների թիվը			Անհատական տնային տնտեսություններ	Բազմաբնակարանային շենքեր	ՋՋ ցանցին միացված բաժանորդներ որոնք կօգտվեն ծրագրի շրջանակներում իրականացված վերանորոգման աշխատանքներից		Ընդամենը շահառու բաժանորդներ
	սղամարդ	կին	ընդամենը			Անհատական տնային տնտեսություններ	Բազմաբնակարանային շենքերի բնակիչներ	
Աշտարակ	4719	5769	10488	922	1700	3309	2939	8870

Ստորև բերված Աղյուսակ 3-ում թվարկված են հիմնական սոցիալական հնարավոր ազդեցությունները: Նախնական գնումը եզրահանգել է, որ մասնավոր հողակտորների կամ այլ սեփականության օբյեկտների վրա, այդ թվում պտղատու ծառերի և այլ բերքի վրա ազդեցություն չի լինելու: Տների մուտքերը չեն փակվելու և ազատ մոտեցումն ապահովվելու է: Բնակչության խոցելի խմբերը որևէ բացասական ազդեցության չեն ենթարկվելու, իսկ Ծրագրի տարածքում բնակվող փախստականները կօգտվեն Ծրագրի իրականացումից: Պատմամշակութային արժեքների և հուշարձանների վրա ազդեցություն չի ակնկալվում:

Աղյուսակ 3. Տեղեկատվություն սոցիալական ազդեցությունների գնության մասին

#	Ազդեցություն	Այո	Ոչ	Նշումներ
1	Բնակիչների մուտքը դեպի իրենց սեփականություն՝ տներ, հողակտորներ, ջրի աղբյուրներ, հասարակական վայրեր սահմանափակված է		V	
2	Մարդկանց վերաբնակեցման կամ հողակտորների (մասնավոր կամ համայնքային) օտարման անհրաժեշտություն		V	

Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծում

#	Ազդեցություն	Այո	Ոչ	Նշումներ
3	Տնային տնտեսություններին հասցվող վնաս, ինչպիսիք են մրգերի կամ այլ բերքին, մրգատու ծառերին, կամ այլ կառույցներին (պահեստարաններին, բացօդյա խոհանոցներին, դրսի գուգարաններին և այլն հասցվող վնասը)		V	
4	Հողային աշխատանքները պատմական, մշակութային կամ հնագիտական հուշարձանների հարևանությամբ հնարավոր են		V	
5	Բնակչության խոցելի խմբերը (տարեց թռչակառուներ, հաշմանդամներ, կանայք, հատկապես տնտեսությունը վարող կանայք և այլն) ենթարկվելու են բացասական ազդեցության		V	

Ծրագրի իրականացման շնորհիվ ակնկալվում են հետևյալ դրական սոցիալական արդյունքները

- հուսալի և կայուն ջրամատակարարում բաժանորդներին;
- խմելու ջրի որակի բարելավում;
- ջրի միջոցով տարածվող հիվանդությունների ռիսկի կրճատում;
- կանանց կենցաղային պայմանների բարելավում;
- բաժանորդների կողմից ջրամատակարարման հսկողության և կառավարման հնարավորություններ:

Բացասական սոցիալական ազդեցություններ կարող են լինել տեղական բնակչությանը հասցվող անհարմարությունների ձևով (փոշի, աղմուկ, տների մուտքերի խոչնդոտում, ցեխի տարածում և այլն) ինչը սակայն կարող է մեղմացվել շինարարական գործընթացի ճիշտ կազմակերպման միջոցով: Բոլոր ազդեցությունները լինելու են ժամանակավոր և հեշտությամբ կառավարվելու են մեղմացնող միջոցառումների միջոցով:

Հնարավոր զգայուն ազդակիրները կտեղեկացվեն Կապալառուի կողմից իրենց թաղամասում շինարարական աշխատանքների մեկնարկի մասին, որի պատճառով հնարավոր է փոշու, աղմուկի մակարդակի բարձրացում, ճանապարհների ժամանակավոր փակում և շրջանցիկ ուղիներ: Հասարակությունը տեղեկացվելու է լրատվամիջոցների միջոցով, ինչպես նաև տեղադրվելու է տեղեկատվական ցուցանակ, որը պարունակելու է կոնտակտային տվյալներ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու և բողոքներ ներկայացնելու համար:

Բացասական սոցիալական ազդեցություններն են.

Փողոցների երթևեկության խաթարում

Փողոցների գերծանրաբեռնվածությունից և երթևեկության խաթարումներից խուսափելու նպատակով Կապալառուն պատշաճ ձևով կազմակերպելու է

շինհրապարակը, մասնավորապես մեքենաների կայանատեղը և շինճամբարը հիմնվելու են հատուկ հատկացված անվտանգ վայրում; Կապալառուն խուսափելու է շինարարական և կենցաղային աղբը շին հրապարակում թողնելուց կամ այրելուց; Կապալառուն իրականացնելու է աշխատանքները փուլ-առ-փուլ տեղեկացնելով բնակիչներին յուրաքանչյուր փուլը սկսելուց առաջ: Ազդակիր մարդկանց անվտանգությունը ապահովվելու է ճանապարհային նշանների, շրջանցիկ ուղիների և պաշտպանիչ արգելապատնեշների տեղադրման միջոցով:

Աղմուկ և թրթռումներ

Աղմուկից և թրթռումներից անհարմարությունները կնվազեցվեն ԲԿՄՊ-ում նախատեսված մեղմացնող միջոցառումների միջոցով. Աղմուկի և թրթռումների մակարդակը պահվելու է ՀՀ օրենսդրությամբ թույլատրված նորմերի սահմաններում: Աղմուկի մակարդակի բարձրացման հետ կապված անհարմարություններից խուսափելու համար բնակելի հատվածներում աշխատանքները կտարվեն բացառապես ցերեկային աշխատանքային ժամերին: Կապալառուն խուսափելու է աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, գործելու են միայն համապատասխան խլացուցիչներով հագեցած մեքենաները: Թրթռումներ առաջացնող մեքենաների գործելուց մասնավոր տներին և կառույցներին հասցվող հնարավոր վնասից և տեղական բնակչության հետ հնարավոր բախումներից խուսափելու համար Կապալառուին խորհուրդ է տրվում մինչև շինարարական աշխատանքները սկսելն իրականացնել նախնական հետազոտություն տների և կառույցների ներկա վիճակն արձանագրելու համար: Կապալառուն լիովին պատասխանատու կլինի իր կողմից հասցվող վնասի համար:

Ջրի որակի վատթարացում

Կապալառուն ձեռնարկելու է արդյունավետ միջոցներ մատակարարվող ջրի բարձր որակն ապահովելու համար: Խողովակները շին հրապարակ են փոխադրվելու երկու կողմից փակ վիճակում խուսափելու համար տարբեր բնույթի օտար մարմինների ներթափանցումից: Տեղադրումից հետո խողովակները լվացվելու և վարակազերծվելու են (СННП 04.02-84 Արտաքին ցանցի և կառույցների ջրամատակարարում) մինչև ջրամատակարարման ցանցին միացվելը:

Աշխատարակ քաղաքի խմելու ջրի որակը պարբերաբար ստուգվում է ՀԶԿ ՓԲԸ կողմից խորքային հորերի ջրի պլանային նմուշառման միջոցով: Առողջապահության նախարարության կողմից պահանջվող բոլոր պարամետրերը ստուգվում են: Ջրի որակի մոնիտորինգն իրականացվում է նաև Պետական

հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից համաձայն «Խմելու ջուր. Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն №2-III-՝2-1» (գրանցված է 28.12.2002Ճ) սանիտարական կանոնների և նորմերի, որոնցով սահմանվում են խմելու ջրի որակին ներկայացվող պահանջները, ինչպես նաև արտադրվող և ջրամատակարարման համակարգերի միջոցով բնակչությանը մատակարարվող ջրի որակի հսկողության կանոնները:

Կոմունալ գծերին և կոմունիկացիաներին հասցվող վնաս

Առկա կոմունալ գծերին և կոմունիկացիաներին (ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական) հասցվող ցանկացած վնաս վերականգնվելու է Կապալառուի կողմից իր միջոցների հաշվին: Ծախսերը չեն ընդգրկվելու աշխատանքների կատարողականի մեջ:

Աշխատանքի անվտանգություն և պատահարների կանխարգելում

Շինարարության ընթացքում աշխատողների կամ բնակչության համար վտանգներից կամ պատահարներից խուսափելու համար մի շարք անվտանգության միջոցառումների կատարումը համարվելու է պարտադիր Կապալառուի համար: Մասնավորապես ձեռնարկվելու են հետևյալ միջոցները. շինհրապարակի ցանկապատում, վտանգի մասին նախազգուշացնող նշանների տեղադրում հատկապես բաց փոստրակների և խրամուղիների կողքին; կիրառվող մեքենաների և սարքավորումների վիճակը մշտապես զննվելու է համապատասխան որակավորում ունեցող անձնակազմի կողմից:

Կապալառուն կազմակերպելու է առաջին օգնության և աշխատանքի անվտանգության դասընթացներ ամբողջ անձնակազմի համար, օրեկան աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչպես նաև մինչև աշխատանքները սկսելն ապահովելու է իր աշխատողների ներկայությունը վերահսկող խորհրդատուի կողմից կազմակերպված անվտանգության դասընթացներին:

Կապալառուն ապահովելու է բոլոր շինհրապարակներում առաջին բուժօգնության դեղատուփի և կրակ մարիչի առկայությունը: Աշխատանքային անվտանգությունը, մասնավորապես էլեկտրական գործիքների և սարքերի, փոստրակների տեղամասերի և այլն, մշտապես օրեկան հսկվելու է շինարարական աշխղեկների կողմից, ինչպես նաև պարբերաբար մոնիտորինգ է իրականացվելու վերահսկող խորհրդատու կազմակերպության բնապանպանության մասնագետի կողմից: Աշխատանքի անվտանգության ցանկացած խախտում պարտադիր

ենթակա է վերացման, հակառակ դեպքում կգրանցվի և կդիտվի որպես աշխատանքի անհամապատասխանություն:

3.3 Բնապահպանական կառավարման ինստիտուցիոնալ շրջանակ

Առաջարկվող մեղմացնող միջոցառումների իրականացման կազմակերպչական պարտականությունները բաշխված են հետևյալ միավորների միջև.

❖ Թույլտվություններ ձեռք բերելու համար պատասխանատու միավորներ

Նախագծման փուլ

Միավորներ, որոնք պատասխանատու են Ծրագրի իրականացման համար պահանջվող թույլտվությունների ձեռքբերման համար;

- մինչև աշխատանքները սկսելը Խորհրդատուն (CES Consulting Engineers Salzgitter GmbH) ձեռք է բերելու պահանջվող թույլտվությունները, համաձայնությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այդ թվում՝
 - Աշտարակի քաղաքապետարանից թույլտվություն շինարարական և կենցաղային աղբը հատկացված վայրում տեղադրելու վերաբերյալ;
 - Կոմունիկացիաների (գազի խողովակաշարեր, էլեկտրականության և հեռախոսագծեր և այլն) հատման համար շահագործող կազմակերպությունների գրավոր համաձայնությունը:
 - Ճարտարապետական և հատակագծային առաջադրանքները:
- ՀԶԿ-ն մինչև շինարարական աշխատանքները սկսելը ձեռք է բերելու հետևյալ թույլտվություններն ու վկայականները՝
 - Շինարարության թույլտվությունը;

Շինարարության փուլ

ՇՄԿՄՊ-ով նախատեսված մեղմացնող միջոցառումների իրականացման համար պատասխանատուն Կապալառու կազմակերպությունն է: Կապալառուն վարձելու է բնապահպան մասնագետի կամ նշանակելու է բնապահպանական հարցերով զբաղվող անձի, ով պատասխանատու է լինելու ՇՄԿՄՊ-ի իրականացման և ամենօրյա մոնիտորինգի համար: Մեղմացնող միջոցառումների ծախսերը Կապալառուի կողմից ընդգրկվելու են շինարարության նախահաշիվներում:

Կապալառուն պարտավոր է ձեռք բերել բոլոր այն թույլտվությունները, որոնց անհրաժեշտությունը կարող է առաջանալ շինարարության ընթացքում: Դրանք են, մասնավորապես, ՀՀ Մշակույթի նախարարությունից թույլտվությունների

ձեռքբերումը հողային աշխատանքների ընթացքում պատահական գտածոներ, հնագիտական արժեքներ հայտնաբերելու դեպքում:

❖ Շինարարական աշխատանքների համապատասխանությունը ՇՄԿՄՊ-ում նախատեսված միջոցառումներին հսկող միավորներ

- Խորհրդատուն (CES Consulting Engineers Salzgitter GmbH) պատասխանատու է Ծրագրի նախագծերի պատրաստման և շինարարական աշխատանքների վերահսկման, այդ թվում՝ բնապահպանական մոնիտորինգի համար: Խորհրդատուն վարձում է բնապահպան մասնագետի, ով պարբերաբար (առնվազն շաբաթական մեկ անգամ) այցելելու է շինհրապարակ և հսկոլու է մեղմացնող միջոցառումների ժամանակին, պատշաճ և արդյունավետ կատարումը Կապալառուի կողմից, պատրաստելու է ամսեկան հաշվետվություններ և ներկայացնելու է ՀՋԿ-ին: Որպես հաշվետվության ձևաչափ կիրառվելու է մոնիտորինգի ստուգաթերթիկը, որտեղ նշվելու են նկատած տերությունները և խախտումներն, ինչպես նաև՝ թերությունների վերացման միջոցառումները:

- ՀՋԿ բնապահպանական և սոցիալական ազդեցության մասնագետը նույնպես պատասխանատու է ՇՄԿՄՊ-ի մեղմացնող միջոցառումների պատշաճ և ժամանակին կատարումը վերահսկելու համար: Նա նույնպես պարբերաբար այցելելու է շինհրապարակ շին.աշխատանքների ՇՄԿՄՊ-ին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Նա հսկելու է Խորհրդատուի աշխատանքը, ուսումնասիրելու/ վերանայելու և հաստատելու է Խորհրդատուի բնապահպանական ամսեկան հաշվետվությունները:

ՀՋԿ կարող է պահանջել և ստուգել ստացված թույլտվությունների առկայությունն ու վավերականությունը.

❖ ՇՄԿՄՊ-ի ընթացքի և արդյունավետության մոնիտորինգի համար պատասխանատու միավորներ

-Կապալառուն պատասխանատու է իրականացնել շինարարական աշխատանքների մշտական մոնիտորինգ ՇՄԿՄՊ մեղմացնող միջոցառումների պատժաճ և ժամանակին կտարարումն ապահովելու համար:

❖ ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության համար պատասխանատու պետական մարմիններ:

- Բնապահպանական պետական տեսչությունը, Բնապահպանության նախարարություն;

Աշտարակ և Էջմիածին քաղաքների լրացուցիչ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման նախագծում

- Պետական առողջապահական գործակալություն;
- Պետական և մշակութային հուշարձանների գործակալություն, Մշակույթի նախարարություն; անհրաժեշտության դեպքում;
- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ;
- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն:

4. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդատուի բնապահպանության մասնագետը ՀՋԿ-ին ներկայացնելու է բնապահպանական ծրագրի իրականացման, դաշտային ստուգայցերի արդյունքների, նկատված թերությունների և դրանց վերացման արդյունավետության վերաբերյալ ամսական հաշվետվություն մինչև հաջորդ ամսվա 5-ը: Հաշվետվությունը ներկայացվելու է անգլերեն և հայերեն լեզուներով և պարունակելու է բացատրական մասի շարադրություն, լուսանկարներ և ամփոփիչ աղյուսակներ:

Հիմնվելով այդ Խորհրդատուի ամսական հաշվետվությունների վրա, ինչպես նաև ՀՋԿ կողմից իրականացված այցերի արդյունքների վրա, ՀՋԿ եռամսյակային հաշվետվություններ է կազմելու և ներկայացնելու Ջրային տնտեսության պետական կոմիտեին:

ՀՋԿ-ն բնապահպանական հաշվետվություններ է ներկայացնելու նաև ՀԲ-ին համաձայն պայմանագրի դրույթների:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ (ՇՄԿՄՊ)

ՇՄԿՄՊ-ը մշակված է հիմնվելով ներդրումային Ծրագրի շրջանակներում իրականացված բնապահպանական գննության արդյունքների վրա և պարունակում է բացահայտված ազդեցություններին համապատասխան մեղմացնող միջոցառումներ:

ՇՄԿՄՊ-ը բաղկացած է երկու հիմնական բաղադրիչներից՝

1. Մեղմացնող միջոցառումներ և դրանց իրականացման ինստիտուցիոնալ պատասխանատուներ
2. Բնապահպանական մոնիտորինգ դաշտային ստուգայցերի միջոցով:

Կապալառուն դիտարկելու է ներկա ՇՄԿՄՊ-ն որպես Պայմանագրի բաղկացուցիչ մաս և խստագույնս հետևելու է պլանում նախատեսված միջոցառումների

արդյունավետ կատարմանը: ՇՄԿՄՊ-ում նախատեսված միջոցառումների ծախսերն ընդգրկված են շինարարական աշխատանքների միավորի արժեքի մեջ:

Խորհրդատուն մոնիտորինգի է ենթարկելու և հսկելու է մեղմացնող միջոցառումների կատարումը Կապալառուի կողմից և դրանց ոչպատշաճ և ոչ ժամանակին կատարելու դեպքում՝ անհամապատասխանության ծանուցում է ներկայացնելու Կապիալառուին: Անհամապատասխանության ծանուցումը դասակարգվելու է անհամապատասխանության մակարդակների.

Առաջին մակարդակ՝ դաշտային ստուգայցի ժամանակ նկատված թերությունը գրանցվում է մոնիտորինգի ստուգաթերթիկի մեջ; Կապալառուն ստանում է նախազգուշացում նրան ներկայացվում է պահանջ թերությունը երկօրյա ժամկետում վերացնելու և հաշվետվություն ներկայացնելու մասին;

Երկրորդ մակարդակ՝ թերությունը վերացնելու միջոցառումը ձեռնարկված չէ Կապալառուի կողմից կամ անարդյունավետ է: Կապալառուն ստանում է անհամապատասխանության մասին ծանուցում և տուգանք Պայմանագրի ընդհանուր գումարի 0,1%-ի չափով:

